Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության կողմից 2018 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

Մարզպետը օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ապահովվել է ՀՀ օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը: 2018 թվականի ընթացքում մարզպետի կողմից ընդունվել են 76 որոշումներ, 149 կարգադրություններ,աշխատակազմի ղեկավարի կողմից արձակվել են 203 հրամաններ. հրավիրվել է մարզխորհրդի 1 նիստ:

2018 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնում մուտքագրվել են 7541 և ելք են արվել 9575 փաստաթղթեր:

Մարզպետը համագործակցված աշխատանքներ է տարել հանրապետական գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունների հետ:

Մարզպետարանի աշխատակազմում 2018թ դեկտեմբերի 28-ի դրությամբ թափուր են մարզպետարանի՝ 1 վարչական, 2 քաղաքացիական ծառայողների պաշտոններիի հաստիքներ:

Սահմանված կարգով իրականացվել են աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վերապատրստման կազմակերպման աշխատանքները, ըստ որի գրաֆիկով նախատեսված տարբեր ժամանակահատվածներում երկօրյա մասնագիտական վերապատրաստում անցան աշխատակազմի թվով 14 քաղաքացիական ծառայողներ:

Մարզպետարանի աշխատակազմը մեծ ուշադրություն է դարձնում քաղաքացիների ընդունելության կազմակերպմանը և վերջիններիս կողմից ներկայացված դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկմանը, սահմանված կարգով դրանց ուսումնասիրմանը: 2018 թվականի ընթացքում մարզպետի մոտ կատարվել է 682 քաղաքացիների ընդունելություն:

Տարվա ընթացքում ՀՀ Նախագահի ու կառավարության աշխատակազմի, ինչպես նաև հանրապետական գործադիր իշխանության մյուս մարմիններից ստացվել ու ՀՀ Վայոց ձորի մարզպետին են վերահասցեագրվել 45 դիմումներ, որից՝ 5-ը ստացվել են Ջերմուկի, 18-ը Վայքի, 22-ը Եղեգնաձորի տարածաշրջանից: 2018 թվականի առաջին կիսամյակում 1097 քաղաքացու դրամական օգնություն է տրամադրվել, 25 հաշմանդամներ ստացել են առողջարանային վերականգնողական ուղեգրեր,իսկ 12-ը պետպատվերի շրջանակներում ստացել են համապատասխան բուժօգնություն: Մեր ամենօրյա ուշադրության կենտրոնում են գտնվել նաև քաղաքացիներին հուզող սոցիալ-տնտեսական,կենցաղային,գյուղ տեխնիկա և անասուններ ձեռք բերելու, աշխատնքային, համայնքների խնդիրներին լուծում տալու հարցերը:

2018 թվականի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետին են դիմել 1326 քաղաքացիներ, որից՝

1.	**Դրամական օգնություն**	**1097**
2.	**Նպաստի հարցերով**	**21**
3.	**Հողային վեճեր և սահմանների ճշտում**	**34**
4.	**Խմելու և ոռոգման ջրի բարելավման հարցերով**	**26**
5.	**Տան և շինությունների վերականգնման և վթարայնության**	**48**
6.	**Աշխատանքի տեղավորման**	**15**
7.	**ՏԻ մարմիններից բողոքներ և գյուղի հիմնահարցեր**	**3**
8.	**Առողջարանային ուղեգրեր տրամադրելու**	**25**
9.	**Պետ.պատվերով բուժօգնություն**	**12**
10.	**Որդեգրման/երեխային մանկատնից վերադարձնելու/ և ներառական կրթության մեջ ընդգրկելու հարցերով**	**29**
11.	**Կրթության և ՆՈՒՀ-երի հարցերով**	**5**
12.	**Այլ հարցերով**	**11**

Աշխատակազմի քարտուղարության պետ՝ Հ. Կարապետյան

10.01.2019թ.